ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով **ՀՀ Երևան քաղաքի Թաիրով 14 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների** ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀ ՔԿ ԲՄԽԾՁԲ-ՏՀ-25/3» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

07 մայիսի 2025թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Մնացականյան, Տ. Կոմիտասյան, Ա. Մամյան, Լ. Հովակիմյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	*ՀՀ Երևան քաղաքի Թաիրով 14 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ*	*2 632 382*

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀ ՔԿ ԲՄԽԾՁԲ-ՏՀ-25/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	**«Ռիջիդ» ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 08622912, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25 տ., հեռ. 093-35-57-87, rigidalgroup@gmail.com

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Հայտերի գնահատման մասին

4.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել 14.05.2025թ.-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. *14.05.2025թ. ժամը 10:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ*

Նիստը վերսկսվեց 14.05.2025թ. ժամը 10:00-ին:

6.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

6.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի՝ **«Ռիջիդ» ՍՊԸ-ի** ներկայացրած հայտը արձանագրեց, որ ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Մասնագետների կողմից ներկայացված համաձայնագրերում գնման ընթացակարգի ձևը սխալ է նշված՝ գրված է «գնանշման հարցման», սակայն պետք է լինի «բաց մրցույթ»:
- Բացակայում են ներկայացված լիցենզավորված մասնագետների հավաստագրերը:
- Հրավերով նախատեսված Հավելված №1.3-ում /կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող

«ճարտարագետ-էլեկտրիկի» անուն ազգանունները չեն համապատասխանում ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմում նշված մասնագիտություններին:

- Տիգրան Խաչատրյանի և Արմեն Մաթևոսյանի CV-ները ենթակա են շտկման՝ հարկավոր է յուրաքանչյուր մասնագետի մասնագիտական որակավորումը ճիշտ գրել:

- Ներկայացված CV-ներում անհրաժեշտ է հստակ նշել յուրաքանչյուր մասնագետի կողմից տեխնիկական հսկողության բնագավառում /որպես բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ, Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչ, էլեկտրաէներգետիկ ճարտարագետ տեխնիկական հսկիչ, Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ տեխնիկական հսկիչ/ առանձին օբյեկտների մասով մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **«ՀՀ ՔԿ ԲՄԽԾՁԲ-ՏՀ-25/3»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 2.4 կետով՝ Հանձնաժողովը 14.05.2025թ.-ին որոշեց կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Չափաբաժին 1՝ ՀՀ Երևան քաղաքի Թաիրով 14 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում					
հ/հ	**Մասնակցի անվանումը**	**Գնման հայտով սահմանած գին**	**Գին /առանց ԱԱՀ/**	**ԱԱՀ**	**Գին /ներառյալ ԱԱՀ/**
1	«Ռիջիդ» ՍՊԸ	2 632 382	1 780 000	-	1 780 000

8. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 20.05.2025թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. 20.05.2025թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 20.05.2025թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկված փաստաթղթերը: Գնահատող անդամների կողմից գնահատման թերթիկներով գնահատվեց հայտը, որոնց ամփոփ արդյունքները արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում:

11. Հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների ոչ գնային և գնային պայմանները գնահատվել են հետևյալ կարգով. /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/.

Չափաբաժին 1՝ ՀՀ Երևան քաղաքի Թաիրով 14 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում			
Գնահատման չափանիշ	Նվազագույն գնահատական	Առավելագույն գնահատական	Մասնակցի անվանումը **«Ռիջիդ» ՍՊԸ**
Համապատասխանության չափանիշներ			
Նմանատիպ փորձառություն	-	-	բավարար
Լիցենզիա և լիցենզիայի ներդիր	-	-	բավարար
Տեխնիկական առաջարկ (ՏԱ)			
Աշխատակազմ (ՏԱ)	70	100	78
Գնային առաջարկ (ԳԱ)			
Գնային առաջարկ (ԳԱ)	-	100	100

12. Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/.

Չափաբաժին 1՝ ՀՀ Երևան քաղաքի Թաիրով 14 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում
Մասնակիցների տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
Մասնակցի անվանումը
«Ռիջիդ» ՍՊԸ
84,6

13. 20.05.2025թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

13.1 **«ՀՀ ՔԿ ԲՄԽԾՁԲ-ՏՀ-25/3»** ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցին՝ **«Ռիջիդ» ՍՊԸ-ին:**

13.2 Հաստատել **ՀՀ ՔԿ ԲՄԽԾՁԲ-ՏՀ-25/3** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

13.3 Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Վաչիկ Խաչատրյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Հայկ Մնացականյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Տաթևիկ Կոմիտասյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Մամյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Լուսինե Հովակիմյան
5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Սիրանուշ Նազարյան